**4.** Убыток от перерыва в производственной/коммерческой деятельности Страхователя складывается из (в зависимости от того, как это указано в договоре страхования):

**4.1.** суммы недополученной прибыли, и/или

**4.2.** суммы условно-постоянных издержек, и/или

**4.3.** суммы утраченных рентных поступлений.

Страховщик несет ответственность только в отношении убытков от перерыва в производственной/коммерческой деятельности, указанной в договоре страхования (далее по тексту также - застрахованной деятельности).

**1)** Сумма недополученной прибыли – сумма прибыли, которую Страхователь мог бы получить в течение периода перерыва в производственной/коммерческой деятельности, если бы такой перерыв не произошел.

Страховая сумма в отношении недополученной прибыли устанавливается по соглашению Страхователя со Страховщиком и с учетом показателя планируемой прибыли Страхователя от осуществления застрахованной деятельности, которую Страхователь может получить в течение 12 (двенадцати) месяцев или иного периода, если это предусмотрено договором страхования, с учетом факторов, влияющих на данный показатель.

**2)** Сумма условно-постоянных издержек (постоянных текущих расходов) – сумма текущих расходов Страхователя, которые он продолжает нести в силу того, что такие расходы не зависят от оборота предприятия Страхователя, и/или результатов деятельности предприятия Страхователя, и/или наличия перерыва в производственной/коммерческой деятельности Страхователя, и финансирование таких расходов Страхователем продолжает осуществляться с тем, чтобы после восстановления застрахованного имущества, в кратчайшие сроки возобновить производственную/коммерческую деятельность. К таким расходам относятся:

**а)** заработная плата работников Страхователя (включая работников, предоставляющих услуги по договорам гражданско-правового характера);

**б)** обязательные платежи органам социального страхования;

վարձակալած տարածքների, սարքավորումների և այլ գույքի վարձակալության վճարը, եթե վարձակալության և համանման այլ պայմանագրերի պայմաններով վարձակալության վճարները ենթակա են վճարման վարձակալի կողմից՝ անկախ վարձակալած գույքի վնասման կամ ոչնչացման փաստից,

**դ)** հարկերը և վճարները, որոնք ենթակա են վճարման՝ անկախ տնտեսական գործունեության շրջանառությունից և արդյունքներից, մասնավորապես՝ շինությունների, հողակտորների, կապիտալի և հիմնական միջոցների համար հարկերը, գրանցման վճարները և այլն,

**ե)** Ապահովադրի ձեռնարկության համար սահմանված նորմերով մաշվածության մասհանումները,

**զ)** կոմունալ ծառայությունների, կապի ծառայությունների դիմաց վճարները,

**է)** բանկային վարկերի դիմաց տոկոսները՝ պայմանով, որ նման վարկերն Ապահովադրի կողմից ուղղվել են Ապահովադրի ապահովագրված գույքի՝ հիմնական միջոցների օբյեկտների (շենքերի, կառույցների, սարքավորումների և այլնի) արդիականացմանը/նորացմանը,

**ը)** այլ հաստատուն ծախսերը, որոնք կախված չեն ձեռնարկության շրջանառությունից և/կամ ձեռնարկության գործունեության արդյունքներից:

Պայմանական հաստատուն ծախսերի (հաստատուն ընթացիկ ծախսերի) գծով ապահովագրական գումարը սահմանվում է Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ՝ հաշվի առնելով 12 (տասներկու) ամսվա կամ այլ ժամկետի համար Ապահովադրի հաստատուն ընթացիկ ծախսերի պլանավորված ցուցանիշները, եթե դա նախատեսված է ապահովագրության պայմանագրով՝ հաշվի առնելով տվյալ ցուցանիշներից յուրաքանչյուրի վրա ազդող գործոնները:

**3)** Կորցրած վարձակալությունից մուտքերի գումար՝ վարձակալության վճարների գումարը, որն Ապահովադիրը կարող էր ստանալ իր կողմից կնքված վարձակալության և/կամ վարձակալների հետ կնքած համանման այլ պայմանագրերով: Սակայն նման վճարները համարվում են կորցրած միայն եթե վարձակալության և/կամ վարձակալների հետ կնքած համանման այլ պայմանագրերը վաղաժամկետ դադարեցվում են կամ փոփոխվում են վարձակալի պահանջով՝ կապված սույն Պայմանների հիման վրա կնքված ապահովագրության պայմանագրով ապահովագրված և նրանց կողմից վարձակալած գույքի կորստի/ոչնչացման և/կամ վնասման հետ:

Կորցրած վարձակալությունից մուտքերի գծով ապահովագրական գումարը սահմանվում է Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ՝ հաշվի առնելով ապահովագրության պայմանագրի կնքման ամսաթվի դրությամբ առկա, ապահովագրության պայմանագրով ապահովագրված գույքի գծով կնքած վարձակալության և/կամ վարաձակալների հետ կնքած համանման այլ պայմանագրերում նշված վարձակալության վճարների ցուցանիշները:

**4)** Թույլատրվում է կնքել ապահովագրության պայմանագիր սույն Լրացուցիչ պայմաններ N 1-ի 4.1. – 4.3.

**в)** плата за аренду помещений, оборудования или иного имущества, арендуемого Страхователем для своей деятельности, если по условиям договоров аренды или иных подобных им договоров арендные платежи подлежат оплате арендатором вне зависимости от факта повреждения или уничтожения арендованного имущества;

**г)** налоги и сборы, подлежащие оплате вне зависимости от оборота и результатов хозяйственной деятельности, в частности, налоги на строения, земельные участки, капитал или основные фонды, регистрационные сборы и т.д.;

**д)** амортизационные отчисления по нормам, установленным для предприятия Страхователя;

**е)** оплата коммунальных услуг, услуг связи;

**ж)** проценты по банковским кредитам, при условии, что такие кредиты были направлены Страхователем на модернизацию/обновление застрахованного имущества - объектов основных фондов (зданий, сооружений, оборудования и т.д.) Страхователя;

**з)** иные постоянные расходы, не зависящие от оборота предприятия, и/или результатов деятельности предприятия.

Страховая сумма в отношении условно-постоянных издержек (постоянных текущих расходов) устанавливается по соглашению Страхователя со Страховщиком и с учетом плановых показателей постоянных текущих расходов Страхователя за 12 (двенадцать) месяцев или иной период, если это предусмотрено договором страхования, с учетом факторов, влияющих на каждый из этих показателей.

**3)** Сумма утраченных рентных поступлений – сумма рентных платежей, которую Страхователь мог бы получить по заключенным им договорам аренды и/или подобным им договорам с арендаторами. Однако такие платежи считаются утраченными, только если договоры аренды и/или подобные им договоры досрочно расторгаются или изменяются по требованию арендаторов в связи с утратой/гибелью и/или повреждением имущества, застрахованного по договору страхования имущества в соответствии с Правилами, и арендованного ими.

Страховая сумма в отношении утраченных рентных поступлений устанавливается по соглашению Страхователя со Страховщиком и с учетом показателей рентных платежей, указанных в имеющихся на дату заключения договора страхования договорах аренды и/или подобных им договорах с арендаторами, заключенных в отношении застрахованного по договору страхования имущества.

**4)** Допускается заключение договора страхования в

կետերով նախատեսված արտադրական/առևտրային գործունեության ընդհատման ռիսկերից յուրաքանչյուրի գծով առանձին, ինչպես նաև 4.1. և 4.2. կետերում նշվածների գծով համատեղ:
Չի թույլատրվում կնքել ապահովագրության պայմանագիր սույն Լրացուցիչ պայմաններ N 1-ի 4.3. կետում նշված վնասների (կորցրած վարձակալությունից մուտքերի) գծով համատեղ սույն Լրացուցիչ պայմաններ N 1-ի 4.1. կետում (չստացված շահույթ) և 4.2. կետում (պայմանական հաստատուն ծախսեր) նշված վնասների հետ՝ դրանց ցանկացած համադրությամբ, միայն եթե սույն Լրացուցիչ պայմաններ N 1-ի 4.1. կետում և 4.2. կետում նշված վնասները չեն վերաբերում գույքը վարձակալության հանձնելուց տարբեր Ապահովադրի այլ գործունեության տեսակներին:

отношении любого из видов убытков от перерыва в производственной/коммерческой деятельности, указанных в п.п. 4.1 - 4.3 настоящих Дополнительных правил страхования №1, по отдельности, а также указанных в п.4.1 и п.4.2 совместно.
Не допускается заключение договора страхования в отношении убытков, указанных в п.4.3 настоящих Дополнительных правил страхования №1 (утраченные рентные поступления), совместно с убытками, указанными в п.4.1 (недополученная прибыль) и п.4.2 (условно-постоянные издержки) настоящих Дополнительных правил страхования №1, в любой их комбинации, только если убытки, указанные в п.4.1 и п.4.2 настоящих Дополнительных правил страхования №1, не относятся к другим видам деятельности Страхователя, отличным от сдачи в аренду имущества.

5) Այն դեպքում, երբ սույն Լրացուցիչ պայմաններ N 1-ի 4.1., 4.2., 4.3. կետերում նշված վնասների գծով ապահովագրական գումարը սահմանվել է ապահովագրական պատահար տեղի ունենալու ամսաթվի դրությամբ տվյալ ցուցանիշների փաստացի մեծությունից փոքր, ապա ապահովագրական հատուցումը հաշվարկվում է ապահովագրական գումարի և տվյալ ցուցանիշների փաստացի մեծության հարաբերությանը համամասնորեն, եթե այլ բան հատուկ նշված չէ ապահովագրության պայմանագրում:

5) В случае, если страховая сумма в отношении убытков, указанных в пп. 4.1, 4.2, 4.3 настоящих Дополнительных правил страхования №1, была установлена в размере менее фактической величины данных показателей на дату наступления страхового случая, страховое возмещение рассчитывается пропорционально отношению страховой суммы к фактической величине данных показателей, если иное особо не указывается в договоре страхования.

5. Արտադրական/առևտրային գործունեության ընդհատման հետևանքով առաջացած վնասների ապահովագրության գծով ընդհանուր ապահովագրական գումարը կազմվում է ապահովագրության պայմանագրով սահմանված Ապահովադրի ծախքերի/ծախսերի և շահույթների հոդվածների գումարներից: Ընդհանուր ապահովագրական գումարը և ծախքերի/ծախսերի և/կամ շահույթների յուրաքանչյուր հոդվածի (և/կամ հոդվածների խմբի) գծով ապահովագրական գումարները նշվում են ապահովագրության պայմանագրում:

5. Общая страховая сумма по страхованию убытков от перерыва в производственной/коммерческой деятельности складывается из сумм статей затрат/расходов и прибылей Страхователя, установленных по договору страхования. Общая страховая сумма и страховые суммы в отношении каждой из статей (и/или группы статей) затрат/ расходов и/или прибылей указываются в договоре страхования.

6. Արտադրական/առևտրային գործունեության ընդհատման հետևանքով վնասների հատուցման ժամկետ՝ Ապահովադրի գործունեության ընդհատման ժամկետը, որի ընթացքում Ապահովագրողը հատուցում է Ապահովադրին նման ընդհատումից առաջացած վնասները՝ այլ հավասար պայմաններում: Հատուցման ժամկետը սահմանվում է ապահովագրության պայմանագրում՝ կողմերի համաձայնությամբ և կարող է կազմել 1 կամ 2 կամ 3 կամ 6 կամ 9 կամ 12 կամ ավելի ամիս: Հատուցման ժամկետը հաշվարկվում է Ապահովադրի արտադրական/առևտրային գործունեության ընդհատման պատճառ հանդիսացող իրադարձության տեղի ունենալու ամսաթվից:

6. Период возмещения убытков от перерыва в производственной/коммерческой деятельности – период перерыва в деятельности Страхователя, в течение которого Страховщик возмещает Страхователю, при всех прочих равных условиях, убытки от такого перерыва. Период возмещения устанавливается в договоре страхования по договоренности Сторон и может составлять: 1, или 2, или 3, или 6, или 9, или 12, или более месяцев. Период возмещения исчисляется с даты наступления события, повлекшего за собой наступление перерыва в производственной/коммерческой деятельности Страхователя.

7. Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, Ապահովադրի արտադրական/առևտրային գործունեության ընդհատումը համարվում է ավարտված, եթե կորցրած/ոչնչացված և/կամ վնասված գույքը վերականգնվել է մինչև այն վիճակը (տեխնիկական և

7. Если иное не предусмотрено договором страхования, перерыв в производственной/коммерческой деятельности Страхователя считается завершившимся, если утраченное/погибшее и/или поврежденное имущество восстановлено до состояния (по

շահագործման բնութագրիչներով և չափանիշներով), որում այդ գույքը գտնվում էր անմիջականորեն մինչև այն իրադարձության տեղի ունենալը, որը հանգեցրել է նման ընդհատման առաջացմանը, և պատրաստ է շահագործման՝ համաձայն փորձագիտական եզրակացության՝ անկախ այն բանից, թե արդյոք կշահագործվի վերականգնումից անմիջապես հետո, թե ոչ:

**8.** Ապահովագրողը հատուցում է Ապահովադրի գործունեության ընդհատման հետևանքով առաջացած վնասները նման ընդհատման ամբողջ ժամանակահատվածի համար, սակայն ոչ ավելի, քան ապահովագրության պայմանագրում նշված հատուցման ժամկետը՝ սկսած նման ընդհատման պատճառ հանդիսացած իրադարձության տեղի ունենալու ամսաթվից (հաշվի առնելով չհատուցվող գումարը, ինչպես նշված է սույն Լրացուցիչ պայմաններ N 1-ի կետ 9-ում), և ոչ ավելի, քան սույն Լրացուցիչ պայմաններ N 1-ի կետ 5-ի համաձայն սահմանված ապահովագրական գումարը:

**9.** Ապահովադրի արտադրական/առևտրային գործունեության ընդհատման հետևանքով առաջացած վնասների ապահովագրության դեպքում ապահովագրության պայմանագրով նախատեսվում է (եթե այլ բան նշված չէ ապահովագրության պայմանագրում) չհատուցվող գումար (հաշվի առնելով սույն Պայմանների կետ 6-ի դրույթները): Չհատուցվող գումարը սահմանվում է կողմերի համաձայնությամբ բացարձակ դրամային (արժեքային) արտահայտությամբ կամ տոկոսներով: Ապահովագրության պայմանագրով կարող են սահմանվել նաև Ապահովադրի գործունեության ընդհատման օրեր (ժամանակային չհատուցվող գումար կամ սպասման ժամկետ)՝ սկսած Ապահովադրի գործունեության ընդհատման պատճառ հանդիսացած իրադարձության տեղի ունենալու ամսաթվից: Չհատուցվող գումարը/սպասման ժամկետը հաշվի է առնվում յուրաքանչյուր ապահովագրական պատահարի գծով:

**10.** Ապահովադրի արտադրական/առևտրային գործունեության ընդհատման պատճառ հանդիսացած ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցման հաշվարկն իրականացվում է հետևյալ կարգով.

**1)** Ապահովադրի՝ տնտեսական գործունեությունը պահպանելու գծով հաստատուն ընթացիկ ծախսերի չափը հաշվարկվում է որպես սույն Լրացուցիչ պայմաններ N 1-ի 4.2. կետում նշված՝ ապահովագրված գործունեության ընդհատման ընթացքում փաստացի կատարված ծախսերի գումար, սակայն ոչ ավելի, քան ապահովագրության պայմանագրում նշված հատուցման ժամկետի համար, և ոչ ավելի, քան ապահովագրության պայմանագրում սահմանված ապահովագրական գումարը:

**2)** Ապահովագրված գործունեության ընդհատման արդյունքում չստացված շահույթի գումարը հաշվարկվում է որպես փաստացի շահույթ, որն Ապահովադիրը կարող էր ստանալ արտադրական/առևտրային գործունեության փաստացի ընդհատման ժամկետի ընթացքում, սակայն ոչ

техническим и эксплуатационным характеристикам и параметрам), в котором оно находилось непосредственно перед событием, повлекшим за собой наступление такого перерыва, и готово к эксплуатации, в соответствии с экспертным заключением, независимо от того, будет оно запущено в эксплуатацию сразу после восстановления или нет.

**8.** Страховщик возмещает убытки от перерыва в деятельности Страхователя за весь период такого перерыва, но не более указанного в договоре страхования периода возмещения, с даты события повлекшего наступление такого перерыва (с учетом франшизы, как указано в п.9 настоящих Дополнительных правил страхования №1), и не более страховой суммы, установленной в соответствии с п. 5 настоящих Дополнительных правил страхования №1.

**9.** При страховании убытков от перерыва в производственной/коммерческой деятельности Страхователя, договором страхования предусматривается (если в договоре страхования не указано иное) франшиза (с учетом положений раздела 6 настоящих Правил). Франшиза устанавливается по соглашению сторон в абсолютном денежном (стоимостном) выражении или в процентах. Договором страхования могут быть также установлены дни перерыва в деятельности Страхователя (временная франшиза или беспретензионный период), начиная со дня наступления события, повлекшего перерыв в деятельности Страхователя. Франшиза/беспретензионный период учитывается по каждому страховому случаю.

**10.** При наступлении страхового случая, повлекшего за собой перерыв в производственной/коммерческой деятельности Страхователя, расчет страхового возмещения производится в следующем порядке:

**1)** Размер постоянных текущих расходов Страхователя по поддержанию хозяйственной деятельности исчисляется как сумма фактически произведенных за период перерыва в застрахованной деятельности, расходов, перечисленных в п.4.2. настоящих Дополнительных правил страхования №1, но не более чем за период возмещения, указанный в договоре страхования и не более страховой суммы, указанной в договоре страхования.

**2)** Сумма неполученной прибыли в результате наступления перерыва застрахованной деятельности рассчитывается как фактическая прибыль, которую Страхователь мог бы получить за фактический период перерыва в производственной/коммерческой деятельности, но не более периода возмещения и страховой суммы, указанных в договоре страхования,

ավելի, քան ապահովագրության պայմանագրով սահմանված հատուցման ժամկետը և ապահովագրական գումարը՝ հաշվի առնելով դրա վրա ազդող բոլոր գործոնները՝ ներառյալ ինքնարժեքի հաշվարկը, պլանային ցուցանիշների կատարման աստիճանը անմիջականորեն մինչև ապահովագրական պատահար տեղի ունենալը, նախորդ ժամկետների շահույթի ցուցանիշները և այլ գործոններ: Եթե նախորդ 12 (տասներկու) ամիսների ընթացքում Ապահովադիրը շահույթ չի ստացել, ապա տեղի ունեցած ընդհատման արդյունքում չստացված շահույթի գումարի հատուցում չի իրականացվում:

**3)** Կորցրած վարձակալությունից մուտքերի գումարը հաշվարկվում է որպես վարձակալության վճարների գումար, որոնք Ապահովադիրը կարող էր ստանալ իր կողմից՝ ապահովագրության պայմանագրով ապահովագրված գույքի գծով վարձակալների հետ կնքած վարձակալության պայմանագրերով, եթե նման վարձակալության պայմանագրերը չլինեին լուծված կամ փոփոխված վարձակալների պահանջով՝ սույն Պայմանների համաձայն կնքված ապահովագրության պայմանագրով ապահովագրված և նրանց կողմից վարձակալած գույքի կորստի/ոչնչացման և/կամ վնասման պատճառով, սակայն ոչ ավելի, քան ապահովագրության պայմանագրում նշված հատուցման ժամկետի համար, և ոչ ավելի, քան ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրական գումարը:

**4)** Սույն Լրացուցիչ պայմաններ N 1-ով ապահովագրական հատուցում հաշվարկելիս հաշվի են առնվում Ապահովադրի փաստացի կրած ծախսերն՝ ուղղված արտադրական/առևտրային գործունեության պահպանմանը նախկին ծավալներով և վնասի նվազեցմանը՝ պայմանով, որ նման ծախսերը նախապես համաձայնեցված են եղել Ապահովագրողի հետ և դրանց չափը չի գերազանցում սույն ապահովագրության Պայմանների հիման վրա կնքած ապահովագրության պայմանագրով սահմանված ընդհանուր ապահովագրական գումարը, ինչպես նաև վնասի գումարը, որը հաջողվել է կանխել կամ նվազեցնել նման ծախսեր իրականացնելու արդյունքում:

**11.** Սեփական տնտեսական գործունեությունը պահպանելու գծով Ապահովադրի հաստատուն ընթացիկ ծախսերը ենթակա են հատուցման միայն այն դեպքում, եթե օրենքի ուժով և/կամ պայմանագրով Ապահովադիրը պարտավոր է շարունակել կրել նման ծախսերը կամ եթե դրանց իրականացումն անհրաժեշտ է Ապահովադրի ընդհատված արտադրական/առևտրային գործունեությունը վերսկսելու համար:

**12.** Տնտեսական գործունեությունը պահպանելու գծով հաստատուն ընթացիկ ծախսերը և չստացված շահույթի գումարը ենթակա են հատուցման այն չափով, որով դրանք ծածկված (փոխհատուցված) կլինեին ապահովագրված արտադրական/առևտրային գործունեության արդյունքում ընդհատման ժամանակահատվածում ստացված եկամուտներով, եթե նման ընդհատում չլիներ:

с учетом всех факторов, влияющих на неё, включая расчет себестоимости, степень выполнения плановых показателей непосредственно до наступления страхового случая, показатели прибыли за предыдущие периоды и прочие факторы. Если в течение предыдущих 12 (двенадцати) месяцев прибыль Страхователем не получалась, возмещение суммы неполученной прибыли в результате наступившего перерыва не производится.

**3)** Сумма утраченных рентных поступлений исчисляется как сумма арендных платежей, которые Страхователь мог бы получить по заключенным им договорам аренды с арендаторами застрахованного по договору страхования имущества, если бы такие договоры аренды не были бы расторгнуты или изменены по требованию арендаторов по причине утраты/гибели и/или повреждения арендованного ими и застрахованного по договору страхования имущества в соответствии с настоящими Правилами, но не более чем за период возмещения, указанный в договоре страхования и не более страховой суммы, указанной в договоре страхования.

**4)** При расчете страхового возмещения по настоящим Дополнительным правилам страхования №1 учитываются фактически понесенные расходы Страхователя, направленные на сохранение производственной/коммерческой деятельности в прежнем объёме и минимизацию убытка при условии, что такие расходы были предварительно согласованы со Страховщиком и их величина не превышает общей страховой суммы, установленной договором страхования, заключенным на основании настоящих Правил страхования, а также суммы убытка, который удалось предотвратить или минимизировать с помощью осуществления таких расходов.

**11.** Постоянные текущие расходы Страхователя по поддержанию своей хозяйственной деятельности, подлежат возмещению только в том случае, если Страхователь обязан в силу закона и/или по договору продолжать нести такие расходы или если их осуществление необходимо для возобновления прерванной производственной/коммерческой деятельности Страхователя.

**12.** Постоянные текущие расходы по поддержанию хозяйственной деятельности и сумма неполученной прибыли подлежат возмещению в той мере, в которой они были бы покрыты (компенсированы) доходами от застрахованной производственной/коммерческой деятельности за период перерыва, если бы такой перерыв не наступил.

**13.** Амортизационные отчисления на здания, оборудование и прочие объекты основных фондов Страхователя, возмещаются только в том случае, если

13. Շենքերի, սարքավորումների և Ապահովադրի այլ հիմնական միջոցների մաշվածության մասհանումները հատուցվում են միայն այն դեպքում, եթե նման մասհանումներն իրականացվում են հիմնական միջոցների չվնասված օբյեկտների համար, կամ դրանց չվնասված մնացած մասերի համար:
14. Ապահովագրական հատուցման գումարի հաշվարկն իրականացվում է Ապահովադրի հաշվապահական հաշվառման տվյալների օգտագործմամբ: Ապահովադիրը պարտավոր է վարել հաշվապահական հաշվառում և Ապահովագրողի պահանջով տրամադրել բոլոր հաշվապահական գրքերը, գրառումները, գրանցամատյանները և ապահովագրական հատուցման չափը որոշելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր: Հաշվապահական փաստաթղթերն Ապահովադիրը պետք է պահպանի այնպես, որ բացառի ապահովագրական պատահարի արդյունքում ապահովագրված գույքի հետ դրանց ոչնչացումը:
15. Ապահովագրական հատուցման հաշվարկն իրականացնելիս պետք է հաշվի առնվեն բոլոր գործոնները, հանգամանքները և իրադարձությունները, որոնք կարող էին ազդել Ապահովադրի ապահովագրված արտադրական/առևտրային գործունեության ընթացքի և արդյունքների վրա, եթե նման գործունեության ընդհատում տեղի չունենար:
16. Եթե Ապահովադիրն ստացել է վնասների հատուցում երրորդ անձանց կողմից, Ապահովագրողը հատուցում է միայն ապահովագրության պայմանագրով հատուցման ենթակա գումարի և երրորդ անձանց կողմից հատուցված գումարի միջև տարբերությունը:
17. Ապահովագրության պայմանագրով Ապահովադրի արտադրական/առևտրային գործունեության ընդհատման հետևանքով առաջացած վնասների գծով բոլոր ապահովագրական հատուցումների գումարը չի կարող գերազանցել Ապահովադրի արտադրական/առևտրային գործունեության ընդհատման հետևանքով առաջացած վնասների գծով ընդհանուր ապահովագրական գումարը:
Ապահովագրության պայմանագրով ապահովագրության ժամկետի ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարի գծով ապահովագրական հատուցման գումարը, որի սահմաններում Ապահովագրողը կարող է իրականացնել ապահովագրական հատուցման վճարում, սահմանվում է որպես ապահովագրության պայմանագրով Ապահովադրի արտադրական/առևտրային գործունեության ընդհատման հետևանքով առաջացած վնասների գծով ապահովագրական գումարի և նման ապահովագրության պայմանագրով ապահովագրության ժամկետի ընթացքում տեղի ունեցած նախորդ ապահովագրական պատահարների արդյունքում Ապահովադրի արտադրական/առևտրային գործունեության ընդհատման հետևանքով առաջացած վնասների գծով վճարված կամ վճարման ենթակա ապահովագրական հատուցումների գումարի տարբերություն: Նման տարբերության հաշվարկը կատարվում է այն ապահովագրական պատահարների տեղի ունենալու ամսաթվերով, որոնց գծով վճարվել է կամ պետք է

такие отчисления производятся на неповрежденные объекты основных фондов, или на оставшиеся неповрежденными их части.
14. Расчет суммы страхового возмещения производится с использованием данных бухгалтерского учета Страхователя. Страхователь обязан вести бухгалтерский учет и предоставлять по требованию Страховщика все бухгалтерские книги, записи, регистры или иные документы, необходимые для определения размера страхового возмещения. Бухгалтерские документы должны храниться Страхователем таким образом, чтобы исключить возможность их уничтожения вместе с застрахованным имуществом в результате наступления страхового случая.
15. При расчете суммы страхового возмещения подлежат учету все факторы, обстоятельства и события, которые могли бы повлиять на ход и на результаты застрахованной производственной/коммерческой деятельности Страхователя, если бы перерыв в такой деятельности не произошел.
16. Если Страхователь получил возмещение ущерба от третьих лиц, Страховщик возмещает только разницу между суммой, подлежащей возмещению по договору страхования, и суммой, компенсированной третьими лицами.
17. Сумма всех страховых возмещений по договору страхования в отношении убытков от перерыва в производственной/коммерческой деятельности Страхователя не может превысить общую страховую сумму в отношении убытков от перерыва в производственной/коммерческой деятельности Страхователя.
Сумма страхового возмещения по страховому случаю, произошедшему в период страхования по договору страхования, в пределах которой Страховщик может осуществить выплату страхового возмещения, определяется как разность между общей страховой суммой по договору страхования в отношении убытков от перерыва в производственной/коммерческой деятельности Страхователя и суммой выплаченных/подлежащих выплате страховых возмещений по предыдущим страховым случаям, произошедшим в период страхования по такому договору страхования, в отношении убытков от перерыва в производственной/коммерческой деятельности Страхователя. Расчет такой разницы производится по датам наступления страховых случаев, по которым было или должно быть выплачено страховое возмещение.
Указанное правило справедливо в отношении каждой из застрахованных сумм по убыткам от перерыва в производственной/коммерческой деятельности Страхователя (согласно п.4 настоящих

վճարվի ապահովագրական հատուցում:
Նշված կանոնն արդար է Ապահովադրի արտադրական/առևտրային գործունեության ընդհատման հետևանքով առաջացած վնասների գծով յուրաքանչյուր ապահովագրական գումարի գծով (համաձայն սույն Լրացուցիչ պայմաններ N 1-ի կետ 4-ի), որի նկատմամբ սահմանված է ապահովագրական գումար, ինչպես կլիներ, եթե ապահովագրության պայմանագրով սահմանված լիներ Ապահովադրի արտադրական/առևտրային գործունեության ընդհատման հետևանքով առաջացած վնասների գծով միայն մեկ այդպիսի գումար:

**18.** Սույն Լրացուցիչ պայմաններ N 1-ի իմաստով հետևյալ ծախսերը չեն հանդիսանում ոչ տնտեսական գործունեության պահպանման գծով ընթացիկ ծախսեր, ոչ կորցրած շահույթ, ինչպես նաև չեն հանդիսանում դրանց մաս, չեն ծածկվում և հատուցման ենթակա չեն.

**ա)** վաճառքի, ավելացված արժեքի, շրջանառությունից հարկերը և դրանց համանման հարկերը և վճարները, մաքսային վճարները,
**բ)** ապահովագրության պայմանագրի կնքումից հետո ներմուծված ցանկացած հարկերը (տուրքերը) կապիտալից և հիմնական միջոցներից,
**գ)** Ապահովադրի տնտեսական գործունեության համար օգտագործվող հումքի, կիսաֆաբրիկատների և նյութերի ձեռքբերման ծախսերը,
**դ)** շրջանառության կամ վաճառքների ծավալի հիման վրա վճարվող լիցենզիոն և հեղինակային պարգևատրումները, ինչպես նաև գյուտարարներին պարգևատրումները,
**ե)** Ապահովադրի կողմից ուղարկվող ապրանքների փոխադրման ծախսերը,
**զ)** Ապահովադրի ապահովագրված գործունեության հետ ուղղակի կապ չունեցող գործողությունների գծով ծախսերը, ինչպիսիք են՝ արժեթղթերի, հողամասերի հետ կապված գործողությունները կամ ազատ դրամական միջոցների կամ կապիտալների հետ գործառնությունները, ինչպես նաև նման գործառնություններից շահույթը,

**է)** Տուժանքները, տուգանքները, տույժերը կամ այլ դրամային տուգանային պատժամիջոցները, որոնք Ապահովադիրը՝ նրա կողմից կնքած պայմանագրերին համապատասխան, պարտավոր է վճարել իր պայմանագրային պարտավորությունները չկատարելու համար, մասնավորապես՝ ժամանակին չառաքելու համար, ապրանքի պատրաստման կամ ծառայության տրամադրման կամ նմանատիպ այլ պարտականությունների ուշացման համար, եթե.
- նման չկատարումը չի հանդիսացել ապահովագրված գործունեությունում տեղի ունեցած ընդհատման ուղղակի հետևանք,
- վերը նշված պատժամիջոցները նախատեսված են պայմանագրերով, որոնք ուժի մեջ են մտնում արտադրությունում ընդհատում առաջացրած ապահովագրական պատահարի տեղի ունենալուց հետո,
**ը)** ապահովագրության պայմանագրերի գծով ապահովագրավճարները (եթե այլ բան նախատեսված չէ

Дополнительных правил страхования №1), в отношении которой установлена страховая сумма, как если бы по договору страхования была бы застрахована только одна такая сумма по убыткам от перерыва в производственной/коммерческой деятельности Страхователя.

**18.** В смысле настоящих Дополнительных правил страхования №1, следующие расходы не являются ни текущими расходами по продолжению хозяйственной деятельности, ни потерянной прибылью, равно как не являются их частью, не покрываются и не подлежат возмещению:
**а)** налоги на продажу, на добавленную стоимость, с оборота и аналогичные им налоги и сборы, таможенные платежи;
**б)** любые налоги (сборы) с капитала и основных фондов, введенные после заключения договора страхования;
**в)** расходы по приобретению сырья, полуфабрикатов и материалов, используемых в хозяйственной деятельности Страхователя;
**г)** выплачиваемые на основе оборота или объема продаж лицензионные и авторские вознаграждения, а также вознаграждения изобретателям;
**д)** расходы по перевозке товаров, отправляемых Страхователем;
**е)** расходы по операциям, не имеющим непосредственного отношения к застрахованной хозяйственной деятельности Страхователя, таким как операции с ценными бумагами, земельными участками или операции со свободными денежными средствами или капиталами, а также прибыль от таких операций;
**ж)** неустойки, штрафы, пени или иные штрафные санкции в денежной форме, которые Страхователь, в соответствии с заключенными им договорами, обязан оплачивать за невыполнение своих договорных обязательств, в частности, за не поставку в срок, задержку в изготовлении товара или оказании услуг или иных подобных обязательств, если:

- такое невыполнение не явилось прямым следствием наступившего перерыва в застрахованной деятельности;
- вышеуказанные санкции предусмотрены договорами, вступающими в силу после наступления страхового случая, повлекшего за собой перерыв в производстве;
**з)** страховые премии по договорам страхования (если иное не оговорено договором страхования).

**19.** Не являются страховыми случаями и не подлежат возмещению убытки, наступившие вследствие перерыва в производственной/коммерческой деятельности

ապահովագրության պայմանագրով):

**19.** Ապահովագրական պատահար չեն հանդիսանում և հատուցման ենթակա չեն վնասները, որոնք առաջացել են Ապահովադրի արտադրական/առևտրային գործունեության ընդհատման հետևանքով, այն դեպքում, եթե.

1) Արտադրական/առևտրային գործունեության ընդհատման ընթացքում տեղի են ունենում իրադարձություններ, որոնք կրում են արտակարգ բնույթ և երկարացնում են արտադրական/առևտրային գործունեության ընդհատման ժամկետը՝ այն մասով, որով նման իրադարձությունների տեղի ունենալը բերել է արտադրական/առևտրային գործունեության ընդհատման հետևանքով առաջացած վնասների մեծացմանը,

2) Վնասի մեծացումը տեղի է ունեցել՝ կապված արտադրության ընդլայնման կամ արդիականացման հետ՝ համեմատած ապահովագրական պատահար տեղի ունենալուց անմիջականորեն առաջ դրա վիճակի հետ՝ այն մասով, որով ընդհատումից առաջացած վնասի մեծացումը տեղի է ունեցել նման ընդլայնման կամ արդիականացման հետ կապված,

3) Տեղի են ունեցել արտադրության վերականգնման և վերսկսման գծով արտակարգ հետաձգումներ՝ կապված, օրինակ, դատարանում կամ արբիտրաժային դատարանում գործերի վարման հետ, գույքի սեփականության, տիրապետման, վարձակալության և այլնի գծով հարաբերությունները պարզելու հետ՝ այն մասով, որով ընդհատումից առաջացած վնասի մեծացումը տեղի է ունեցել նման հետաձգումների հետ կապված,

4) Ապահովադիրը չի կարողացել ժամանակին վերականգնել վնասված կամ փոխարինել կորցրած գույքը կամ ժամանակին ձեռնարկել արտադրությունը վերականգնելու համար բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների բացակայության կամ անբավարարության պատճառով՝ այն մասով, որով ընդհատումից առաջացած վնասի մեծացումը տեղի է ունեցել նման ոչ ժամանակին վերականգնման կամ փոխարինման հետ կապված,

5) Գույքի վերականգնումը կամ արտադրության վերսկսումը հետաձգվում է այն պատճառով, որ պետական իշխանության կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կիրառվում են Ապահովադրի կողմից իրականացվող վերականգնման աշխատանքների կամ տնտեսական գործունեության նկատմամբ ինչ-որ սահմանափակումներ՝ այն մասով, որով ընդհատումից առաջացած վնասի մեծացումը տեղի է ունեցել նման հետաձգումների հետ կապված:

**20.** Ապահովագրական պատահար չեն հանդիսանում և չեն ծածկվում ու հատուցման ենթակա չեն Ապահովադրի վնասները, որոնք կապված են.

1) Ապահովադրի նկատմամբ երրորդ անձանց հայցերի հետ, որոնց հանդեպ պարտականությունների կատարումն անհնարին է դարձել արտադրության ընդհատման արդյունքում:

2) Բարոյական վնասի հատուցման հետ:

3) Պատվի, արժանապատվության և գործարար համբավի

Страхователя, в случае, если:

1) Во время перерыва в производственной/коммерческой деятельности наступают события, носящие чрезвычайный характер и увеличивающие период перерыва в производственной/коммерческой деятельности, - в той мере, в которой наступление таких событий привело к увеличению ущерба от перерыва в производственной/коммерческой деятельности;

2) Увеличение ущерба произошло в связи с расширением или обновлением производства по сравнению с его состоянием непосредственно перед наступлением страхового случая, - в той части, в которой увеличение убытка от перерыва произошло в связи с таким расширением или обновлением;

3) Имели место чрезвычайные задержки в восстановлении и возобновлении производства, связанные, например, с ведением дел в суде или арбитраже, выяснением отношений собственности, владения, аренды имущества и т.д., - в той части, в которой увеличение убытка от перерыва произошло в связи с такими задержками;

4) Страхователь не смог своевременно восстановить поврежденное или заменить утраченное имущество или своевременно принять все необходимые меры по восстановлению производства из-за отсутствия или недостатка денежных средств, - в той части, в которой увеличение убытка от перерыва произошло в связи с таким несвоевременным восстановлением или заменой;

5) Восстановление имущества или возобновление производства задерживается в связи с тем, что органами государственной власти или местного самоуправления накладываются какие-либо ограничения в отношении восстановительных работ или хозяйственной деятельности Страхователя, - в той части, в которой увеличение убытка от перерыва произошло в связи с такой задержкой.

**20.** Не являются страховыми случаями и не покрываются и не подлежат возмещению убытки Страхователя, связанные с:

1) Исками третьих лиц к Страхователю, выполнение обязательств перед которыми стало невозможным в результате перерыва в производстве.

2) Компенсацией морального вреда.

3) Защитой чести, достоинства и деловой репутации.

Если договором не предусмотрено иное, в отношении страхования риска убытков от перерыва в производственной/коммерческой деятельности, в остальном действуют «Правила страхования

պաշտպանության հետ:
Եթե պայմանագրով արտադրական/առևտրային գործունեության ընդհատման ռիսկի ապահովագրության գծով այլ բան նախատեսված չէ, մնացած մասով գործում են «Ձեռնարկությունների գույքի և գործունեության ընդհատման հետևանքով առաջացած վնասներից ապահովագրության Պայմանները»:

## ԲԱՌԱՐԱՆ

### Ապահովագրական ռիսկեր

**«ԵՐԿՐԱՇԱՐԺ»**՝ վնասների պատճառում երկրակեղևի կտրուկ տատանումների և ցնցումների հետևանքով, որոնք առաջանում են երկրակեղևում կամ վերին միջակա երկրապատյանում հանկարծակի տեղաշարժերի ու խզվածքների հետևանքով և փոխանցվում են մեծ տարածությունների վրա առաձգական տատանումների տեսքով:

**«ՍՈՂԱՆՔ»**՝ վնասի պատճառում լեռնային ապարների զանգվածների լանջով տեղաշարժվելու հետևանքով, որն առաջանում է սեփական քաշի և լրացուցիչ բեռնվածության ներգործությամբ՝ լանջի ողողաքանդման, գերխոնավացման, սեյսմիկ կամ տեխնածին ցնցումների և այլ երևույթների հետևանքով:

**«ԴԱՐԱՓՈՒԼ (ՔԱՐԱԹԱՓՈՒՄ)»**՝ վնասների պատճառում ձորերի զառիվայր և զառիթափ լանջերի, գետահովիտների վրայի լեռնային ապարների, մեծ զանգվածների անսպասելի պոկվելու և ընկնելու հետևանքով, որոնք հիմնականում տեղի են ունենում լեռնային ապարների կապակցվածության թուլացման հաշվին, որն առաջանում է հողմահարման պրոցեսների, մակերեսային և ստորգետնյա ջրերի գործունեության ազդեցության հետևանքով:

**«ԳՐՈՒՆՏԻ ՆՍՏՈՒՄ»**՝ երևույթ, որը պայմանավորված է դեղնահողային ապարների անհամաչափ խտացմամբ՝ ապարների սեփական քաշի ազդեցության արդյունքում կամ կառույցի քաշից լրացուցիչ ծանրաբեռնվածության ազդեցության արդյունքում դրա մեջ ջրի ներթափանցման դեպքում: Դեղնահողը կազմված է փոշու մասնիկներից և մանր կավային մասնիկներից, և դասվում է որպես ավազակավեր և կավավազներ:

**«ՁՆԱՀՅՈՒՍ»**՝ վնասի պատճառում զառիվար լեռնային լանջերով ձյան և (կամ) սառույցի արագ, անսպասելի առաջացած դեպի վար շարժման հետևանքով, ինչը վտանգ է ներկայացնում մարդկանց կյանքի և առողջության համար, պատճառում է նյութական վնասներ:

**«ՍԵԼԱՎ»**՝ վնասի պատճառում ջրի և փխրուն ապարների խառնուրդից բաղկացած մեծ կործանարար ուժով սրընթաց հոսանքի հետևանքով, որը հանկարծակի առաջանում է ոչ մեծ լեռնային գետերի ավազաններում՝ ուժգին անձրևների

имущества предприятий и убытков от перерыва в деятельности».

## ГЛОССАРИЙ

### Страховые риски

**«ЗЕМЛЕТРЯСЕНИЕ»** – причинение убытков вследствие подземных толчков и колебаний земной поверхности, возникающих в результате внезапных смещений и разрывов в земной коре или верхней части мантии Земли и передающихся на большие расстояния в виде упругих колебаний.

**«ОПОЛЗЕНЬ»** – причинение убытков вследствие смещения масс горных пород по склону под воздействием собственного веса и дополнительной нагрузки вследствие подмыва склона, переувлажнения, сейсмических или техногенных толчков и иных процессов.

**«ОБВАЛ (КАМНЕПАД)» –** причинение убытков вследствие внезапного отрыва и падения больших масс горных пород на крутых и обрывистых склонах каньонов, речных долин, происходящих главным образом за счет ослабления связности горных пород под влиянием процессов выветривания, деятельности поверхностных и подземных вод.

**«ПРОСАДКА ГРУНТА»** – явление, обусловленное неравномерным уплотнением лёссовых пород при проникновении в них воды под действием собственного веса пород или дополнительной нагрузки от веса сооружения. Лёссы состоят из частиц пыли и мелких глинистых частиц и относятся к супесям и суглинкам.

**«СХОД СНЕЖНЫХ ЛАВИН» –** причинение убытков вследствие быстрого, внезапно возникающего движения снега и (или) льда вниз по крутым склонам гор, представляющего угрозу жизни и здоровью людей, наносящего материальный ущерб.

**«СЕЛЬ» –** причинение убытков вследствие стремительного потока большой разрушительной силы, состоящего из смеси воды и рыхлообломочных пород, внезапно возникающего в бассейнах небольших горных рек в результате сильных дождей или бурного таяния снега, а также нежелательного прорыва.

**«НАВОДНЕНИЕ»** – причинение убытков вследствие затопления территории водой, являющееся

կամ բուռն ձնհալի, ինչպես նաև անցանկալի ճեղքման արդյունքում:

стихийным бедствием (может происходить при подъеме уровня воды во время паводка или половодья, при заторе, зажоре, при нагоне в устье реки повышении воды реки, а также при прорыве гидротехнических сооружений).

**«ՀԵՂԵՂՈւՄ»**՝ վնասների պատճառում տարածքը ջրով ողողվելու արդյունքում, որը հանդիսանում է տարերային աղետ (կարող է առաջանալ հորդացման, գետավարարման, սառցակուտակման, սառցակալության, գետաբերանում ջրի ավելացման ժամանակ գետի ջրի բարձրացման հետևանքով, ինչպես նաև ջրատեխնիկական կառույցների ճեղքման դեպքում):

**«ЗАТОПЛЕНИЕ»** – причинение убытков вследствие покрытия территории водой в период половодья или паводков.

**«ՋՐԱԾԱԾԿՈւՄ»**՝ վնասների պատճառում գետավարարման կամ հորդացման ժամանակաշրջանում տարածքների ջրով ծածկման արդյունքում:

**«ПОДТОПЛЕНИЕ»** – причинение убытков вследствие повышения уровня грунтовых вод, нарушающее нормальное использование территории, строительство и эксплуатацию расположенных на ней объектов.

**«ՎԱՐԱՐՈՒՄ»**՝ վնասների պատճառում գրունտային ջրերի մակարդակի բարձրացման արդյունքում, որը խախտում է տարածքի նորմալ օգտագործումը, շինարարությունը և դրանում գտնվող օբյեկտների շահագործումը:

**«СМЕРЧ»** – причинение убытков вследствие сильного объемистого атмосферного вихря диаметром до 1000 м, в котором воздух вращается со скоростью до 100 м/с, обладающий большой разрушительной силой.

**«ՄՐՐԿԱՍՅՈւՆ»**՝ վնասների պատճառում մինչև 1000 մ տրամագծով ուժգին մեծածավալ մթնոլորտային պտտահողմի արդյունքում, որի ներսում օդը պտտվում է մինչև 100 մ/վ արագությամբ, և որն օժտված է մեծ ավերիչ ուժով:

**«ШТОРМ»** –причинение убытков вследствие длительного очень сильного ветра со скоростью свыше 20 м/с, вызывающего сильные волнения на море и разрушения на суше.

**«ՄՐՐԻԿ»**՝ վնասների պատճառում 20 մ/վ-ից ավելի արագությամբ երկարատև շատ ուժեղ քամու արդյունքում, որն առաջացնում է ուժեղ ալեկոծություններ ծովում և ավերածություններ ցամաքում:

**«УРАГАН»** – причинение убытков вследствие очень сильного и продолжительного ветра, скорость которого превышает 32 м/с.

**«ՓՈԹՈՐԻԿ»** ՝ վնասների պատճառում շատ ուժեղ և երկարատև քամու հետևանքով, որի արագությունը գերազանցում է 32 մ/վ-ը:

**«СИЛЬНЫЙ ВЕТЕР»** - причинение убытков вследствие движения воздуха относительно земной поверхности со скоростью или горизонтальной составляющей свыше 14 м/с.

**«ՈւԺԵՂ ՔԱՄԻ»**՝ վնասների պատճառում երկրագնդի մակերեսի նկատմամբ 14 մ/վ-ից ավելի արագությամբ կամ հորիզոնական բաղադրիչով օդի շարժման արդյունքում:

**«ЛИВЕНЬ»** – причинение убытков вследствие кратковременных атмосферных осадков, обычно, в виде дождя или снега, количество которых составляет 30 мм и более за 1 час.

«**ՏԵՂԱՏԱՐԱՓ**»՝ վնասների պատճառում մեծ ուժգնությամբ կարճատև մթնոլորտային տեղումների արդյունքում, սովորաբար անձրևի կամ ձյան տեսքով, որոնց քանակը մինչև 1 ժամվա ընթացքում կազմում է 30 մմ և ավելի:

**«СИЛЬНЫЙ СНЕГОПАД»** – причинение убытков вследствие продолжительного интенсивного выпадения снега, с количеством более 20 мм за 12 часов, приводящее к значительному ухудшению видимости и затруднению движения транспорта.

**«ՈւԺԵՂ ՁՅՈւՆԱՏԵՂՈւՄ»**՝ վնասների պատճառում մինչև 12 ժամվա ընթացքում 20 մմ և ավելի քանակությամբ երկարատև ուժգին ձյունաթափման արդյունքում, որը բերում է տեսանելիության զգալի նվազեցմանը և փոխադրամիջոցների երթևեկության դժվարեցմանը:

**«ГРАД»** – причинение убытков вследствие атмосферных осадков, выпадающих в теплое время года, в виде ледяных частичек плотного льда диаметром от 5 мм до 15 мм, обычно вместе с ливнем при грозе.

**«ԿԱՐԿՈւՏ»**՝ վնասների պատճառում տարվա տաք ժամանակներին 5 մմ-ից 15 մմ տրամագծով խիտ սառույցից

**«ГОЛОЛЁД»** – причинение убытков вследствие слоя плотного льда, образующегося на земной поверхности

սառցե մասնիկների տեսքով տեղացող մթնոլորտային տեղումների հետևանքով, որոնք սովորաբար ուղեկցվում են ամպրոպով զուգորդվող տեղատարափով:

**«ՄԵՐԿԱՍԱՌՈՒՅՑ»**՝ վնասների պատճառում խիտ սառույցի շերտի արդյունքում, որն առաջանում է երկրի մակերևույթի վրա անձրևի կամ մառախուղի գերպաղած կաթիլների սառցակալման դեպքում:

**«ՊՏՏԱՀՈՂՄ»**՝ վնասների պատճառում մթնոլորտային գոյացությունների հետևանքով, որոնք շարժվում են ուղղահայաց կամ թեք առանցքի շուրջ՝ օդի պտտողական շարժումով:

**«ՀՐԱԲԽԻ ԺԱՅԹՔՈՒՄ»**՝ վնասների պատճառում հրաբխային գործընթացի հետևանքով երկրի մակերևույթին շիկացած բեկորների, մոխիրի արտանետման, մագմա զեղելու արդյունքում, որը, լցվելով մակերեսին, դառնում է լավա:

при намерзании переохлажденных капель дождя или тумана.

**«ВИХРЬ»** - причинение убытков вследствие атмосферных явлений, которые двигаются вокруг вертикальной или наклонной оси круговым движением.

**«ИЗВЕРЖЕНИЕ ВУЛКАНА»** – причинение убытков вследствие процесса выброса вулканом на земную поверхность раскалённых обломков, пепла, излияния магмы, которая, излившись на поверхность, становится лавой.